

ԼԷ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ፆኩ 6

ԽՐԲԵՐՐԵԿԵՆ

Ս. ԱԲՈՌՈՅՍ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ու կա՞յ մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ փառք մը աւելի վաւերա-  
կան, քան փառքը Հայկական երուսաղէմին, իրրի ներշնչաբանը ազգային և  
հոգեւոր փերմեռանդն վերացումներու, որպէս ժողովարանը մեր ժողովուրդի ա-  
մենէն հոյակերտ տաճարներուն, որպէս թանգարանը Հայ Արուեստի, զրքի և  
զըշաղրի անդնահատելի արժէքներուն, ու իր իմացական հաստատութիւններով  
որպէս անխարդախ կրթարանը բազմահարիւր հայ մանուկներու, որպէս լուսա-  
ւոր տունը մեր եկեղեցւոյ հոգեւոր առաքելութեան, որ կանչուած է ի մի ժողո-  
ւոր տունը մեր եկեղեցւոյ հոգեւոր առաքելութեան, որ կանչուած է ի մի ժողո-  
ւոր տունը մեր ժողովուրդի նշխարեալ և տարահալած բեկորները, և վերջապէս  
երուսաղէմ՝ միջազգային տարրութեամբ հզօրացուն տրոպայալուծութիւնը մեր



աննկուն հաւատքին ու զերմարդկային զոհողութեանց, որոնցմով այս ամի մը ժողովուրդը, Վրիստոնէութեան մեծ ոստանին, Երուսաղէմ Ս. Քաղաքին մէջ, դասուեր է կարգին Հռովմէական և Յունական հօգորազոյն եկեղեցիներուն, իրրի հաւատարակից սեփականատէրերէն մին, համաքրիստոնէական, Վրիստոսակոյ ուխտավայրերուն:

Ուրախ ենք որ այս անգամ ևս Ս. Աթոռիս նուիրակութիւնը եղած է զգալի նուաճում մը, որով մեր եկեղեցւոյ հոգևոր ու ազգային արժէքներուն, և այդ արժէքներու հրաշակաւոյց կոթողացումը եղող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, և Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռին հրաշունչ բոցով կրակուած են, ամենէն բարգաւաճ զաւուրթներէն մինչև ամենէն աղազունները, փոքրածիւն ու մոռացուածները, մինչև հեռաւոր զիւլներուն ու քաղաքներու մէջ մեկուսացած մէկ կամ երկու ընտանիքներով բեկորները մեր ժողովուրդին:

Խոր զոհունակութեամբ կը տեսնենք որ անգամ մը ևս, Հայաստանեայց եկեղեցւոյ և Ս. Երուսաղէմի նուիրական սրբութիւններուն հրայրքը եղած է զերազանց միջոցը մեր ժողովուրդէն ներս արծարծելու հոգևոր ապրումներու ամենէն վաւերական արտայայտութիւնը — բարեգործութեան առաքինութիւնը: Ու այսպէս է որ մեր հայրենի հողին շափ նուիրական, Հայկական Երուսաղէմին ի պայծառութիւն, տուած են, սկսելով հայ մեծահարուստներէն մինչև ամենէն չքաւորն ու այրին, այնքան սրտաբուխ ու պատրաստակամ զեղումով մը, որուն զրուագումները կը յուզեն մեր մտածումը: Հոգեշնորհ նուիրակին իսկ վկայութեամբ, Երուսաղէմէն հասնող սրբազան կոչին առջև, ոչ մէկ դուռ մնացած է փակ, ոչ մէկ սիրա՝ քարացած կամ անտարբեր:

Երեւոյթ մըն է ասիկա կրկնակիօրէն սրտազրաւ ու զօտեսնող, մանաւանդ Ս. Յակոբեանց զինուորեալ ամի մը Միաբանութեան համար, որ երէկ և այսօր, 15 դարերէ ի վեր, «նորոյս Սիոնի» նուիրական բարձունքին, կը տանի սպասը Հայկական Երուսաղէմի անօրինակ փառքին, յաճախ զինովը իր արիւնին ու անասելի զոհողութիւններուն, իր եղունգներով ու ատամներով տաքուած պայքարով մը, որ անընկճելի է սակայն զինովը իր հոգևոր ու ազգային հաւատքի վէմին: Ու զիտակցութիւնը թէ մեր կողքին ունինք զոհաբերող, զուրգուրացող ու հաւատաւոր ոգին մեր ժողովուրդին, հոգևոր նուիրումի հօր ու նոր աւիւնով կը լեցնէ սրտերը զինուորեալ մեր Միաբանութեան: Ու ասիկա մանաւանդ այս օրերուն, երբ Հայկական Երուսաղէմ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան մեծածախս ու շատ մտահոգիչ գործով, կը սկսի զիմազրաւել իր դարաւոր պատմութեան ծանրակշիռ նոր պահերէն մէկը ևս: Հակառակ մեր օրերու տրամութեան զօտեսնողուած կը զգանք մենք զմեզ, այն վստահութեամբ թէ մեզի հետ պիտի ունենանք ընդմիշտ մեր ժողովուրդի հօր ու բոլորանուէր պաշտպանութիւնը թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական գեափններու վրայ:

Հոգևոր և տնտեսական այս արդիւնաւորութեան առջև, արդար է որ մեր մտածումները կանգ առնեն պահ մը նաև այն բոլոր բարի ու ազնիւ հոգիներուն առջև, որոնք Ս. Աթոռայ նուիրակին հետ ըրին իրենց լաւագոյնը ու բերին խանդավառ աշխատակցութիւն մեր գործին:

Արդարև վարանք չունինք, որ ասոնց կարգին առաջինը պիտի հանդիսանար ինք իսկ Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակը և Ս. Աթոռի համակրելի Միաբանը՝ Գերշ. Տ. Բարգէն Ս. Եպս. Ապատեան։ Գերաշնորհ Սրբազանը իբրև հոգևոր և վարչական պետը համայն Հարաւ. Ամերիկայի հայ գաղութին, իրեն դործակից եկեղեցանուէր ու պատուական ազգայիններուն ու վարչական մարմիններուն հետ, բերած է նուիրակութեան զործին իր խանդավառ ու զրական գործակցութիւնը։ Առաջին մէկ օրէն իսկ Ս. Աթոռոյ նուիրակն ու իր գործը եղած են անոնց բոլորին սրտագին ընդունելութեան առարկան, ու Գերշ. Սրբազանը յաճախ անձամբ առաջնորդած է մեր նուիրակը բարեկեցիկ ու բախտաւոր մերայիններու շրջանակէն ներս։

Երկար պիտի ըլլար շարունակել ասկէ անդին ցանկը բոլոր բարեպաշտ ու ազնիւ հոգիներուն, որոնք պահ մը մէկդի դրած ընտանիք, աշխատանք ու անձնական մտահոգութիւններ, իրենց մտածումին առանցքը բրին ծառայութիւնը իրենց եկեղեցւոյ Սաղիմական փառքին, ու տունէ տուն, խանութէ խանութ, հաստատութիւնէ հաստատութիւն, մէկ առ մէկ բացին Հոգւ. նուիրակին առջև նիւթական կարելիութիւններու բոլոր դռները։

Հոգեպէս մխիթարուած կը զգանք երբ կը լսենք տակաւին մեր գործին առիթով սրտեռանդն ճիզը, Հարաւային Ամերիկայի մեր եկեղեցւոյ հոգևորական դասին, եկեղեցական — վարչական մարմիններուն, հայ մամուլի կազմակերպութիւններուն, հայ ազգանուէր միութիւններուն, հայ ռաւոյականներուն, որոնցմէ իւրաքանչիւրը բերելէ յետոյ իր իսկ նիւթական և բարոյական մասնակցութիւնը, եղած է նոյն ատեն ձեռնառու միջոց, իր շրջանակին մէջ ընդհանրացնելու Հայկական Երուսաղէմի հոգևոր ու բարոյական արժէքներուն զիտակցութիւնը, ու այդ արժէքներուն պահպանութեան ի խնդիր անտեսական զոհողութիւններուն պարտաւորութիւնը։

Կ'ազդեցնէ մեր եկեղեցւոյ պայծառութեան և մեր ժողովուրդի բարգաւաճութեան համար, ու կը հայցենք Ս. Աթոռի հովանաւոր սուրբին, Ս. Գլխադրի պաշտպանութիւնը նաև Ս. Աթոռի բոլոր նուիրատուներուն ու բարեկամներուն համար։ Ս. Գլխադրի հզօր բարեխօսութեամբ երկնաւոր Տէրը Իր աստուածային Հնորհներով ու երջանիկ արեւատութեամբ թող առատացնէ բոլորը, և ընծայէ օրպէս հաւատաւոր սպասարկուները մեր Ս. եկեղեցւոյ և ժողովուրդի պայծառութեան։

Կ. Վ.

